

ԶՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

ՈՒՏԴ 551.444:556.18

Գ. Հ. Մարտիրոսյան

Երևան քաղաքի ջրամատակարարման համակարգի տնտեսական անվտանգության մի խնդրի մասին

(Ներկայացված է ակադեմիկոս Ֆ. Տ. Սարգսյանի կողմից 02/IV 2004)

ՀՀ ջրային օրենսգիրքը, «ջրամատակարարման համակարգ» հասկացության փոխարեն, ինչպես ներկայացված էր նախկին՝ մինչև 2002 թ. գործող օրենսգրքում, սահմանում է նոր հասկացություն՝ «ոչ մրցակցային ջրամատակարարման համակարգ» հիդրոտեխնիկական կառուցվածքների համակարգ, որի առաջնային նպատակը ջրերի ամբարումն է, խմելու ջրի մատակարարումը, կեղտաջրերի հեռացումն ու մաքրումը և ոռոգման ծառայությունների մատուցումը բնակչությանը և որի միջոցով մատուցվող ծառայությունները միակն են» [1]: Հայաստանի ջրամատակարարման համակարգի տնտեսական անվտանգության հայեցակարգի վերաբերյալ առաջարկված մի շարք դրույթներ [2] արդեն իսկ ընդունվել են և մաս են կազմում ջրային օրենսդրության: Մասնավորապես, ՀՀ ջրային նոր օրենսգիրքը հստակ տարանջատում է ջրային ռեսուրսների կառավարման ու պահպանության, ջրային համակարգերի կառավարման մարմինների և սակագնային քաղաքականություն իրականացնող անկախ հանձնաժողովի գործառնությունները: Իրավական դաշտում իրականացված բարեփոխումները հնարավորություն են ընձեռում լուծելու մի շարք առաջնային խնդիրներ, որոնցից ամենակարևորներից մեկը՝ Երևանի շուրջօրյա ջրամատակարարման հիմնահարցն է: Վերջինիս իրականացումը պայմանավորված է տեխնիկական, իրավագիտական և տնտեսագիտական առկա բարդ խնդիրների համատեղ լուծման հնարավորությամբ: Սույն հոդվածում կքննարկենք համակարգի տնտեսական անվտանգությանն առնչվող մի քանի խնդիրներ: Ինչպես և [2]-ում, այստեղ էլ, ոչ մրցակցային ջրամատակարարման համակարգի տնտեսական անվտանգության ապահովման տեսանկյունից առաջարկում ենք կիրառել [3]-ում նկարագրված և երկու խմբի բաժանված անվտանգության ցուցանիշների համակարգը: Ցուցանիշների առաջին խումբը արտահամակարգայինն է, որը ներառում է իր մեջ իրավիճակը իրավական և հարկային դաշտում, ներդրումային քաղաքականությունը, ջրի դեֆիցիտը, ջրի աղտոտվածության վիճակը, սպառողների

վճարունակությունը և այլն: Երկրորդ խումբը ներհամակարգայինն է, որը ներառում է ջրի արդյունահանումը, տեղափոխումը, ամբարումը, բաշխումը, համակարգի տեխնիկական վիճակը և նրա կառավարման կառուցվածքային բաժանումը, հոսակորուստները, էլեկտրաէներգիայի օգտագործումը, դեֆիտորական և կրեդիտորական պարտքերը և այլն: Մեր կարծիքով, տնտեսական անվտանգության ցուցանիշների ներհամակարգային խմբում անհրաժեշտ է ներառել նաև ջրերի հաշվառումը, որը տնտեսական անվտանգության ցուցանիշներից կարևորագույններից է: Մասնավորապես, Երևան քաղաքի ջրամատակարարման պարագայում ջրերի հաշվառման բացակայությունը տասնյակ տարիների ընթացքում հանգեցրել է նրան, որ բնակչությունը օրական մի քանի ժամից ավելի ջրամատակարարում չի ստացել, այն դեպքում, երբ քաղաք մուտք գործող ջրաքանակը կարող է բավարարել նմանատիպ երեք և ավելի սպառողների պահանջարկը: ՀՀ ջրային օրենսգրքի հոդված 19-ը սահմանում է. «Մատակարարվող ջրերի հաշվառումը իրականացվում է ջրաչափերի միջոցով, իսկ դրանց բացակայության դեպքում կիրառվում է կառավարության հաստատած ջրերի հաշվառման այլընտրանքային կարգը»: Միևնույն ժամանակ, նույն հոդվածով սահմանվում է, որ ջրաչափի անսարքության դեպքում, մինչև անսարքության վերացումը, ջրի հաշվառումը կատարվում է այնպիսի կարգով, որը հիմնվում է ջրօգտագործողի կողմից ջրի հնարավոր առավելագույն քանակի օգտագործման և ջրամատակարարի ծախսերի նվազագույն փոխհատուցման սկզբունքի վրա: Ջրերի հաշվառման ներդրումը «Երևանի ջրմուկայություն» ՓԲ Ընկերությանը իրատեսական հնարավորություն է ընձեռնում ըստ էության առանձնացնելու (անկախացնելու) ջուրը արդյունահանելու, մինչև Երևան քաղաքի եզրագիծը ջուր տեղափոխելու (ճանապարհին գյուղական համայնքներին սպասարկելով) և Ընկերության մասնաճյուղերին հանձնելու, Երևան քաղաքում, մասնաճյուղերի կողմից, անհրաժեշտ քանակի և ճնշման ջուրը մինչև բազմաբնակարան շենքերի մուտքամասերի բաժանարարները հասցնելու և համատիրություններին ու այլ ջրօգտագործողներին հանձնելու գործառնությունները: Սա Երևան քաղաքի շուրջօրյա ջրամատակարարման հիմնահարցի լուծման կարևորագույն քայլերից է, որի տնտեսագիտական բնութագիրը մեր կողմից ներկայացված է [4]-ում: Դա հնարավորություն կտա երկու և ավելի անգամ կրճատել հոսակորուստները, կարգավորել ճնշումները, կիսով չափ պակասեցնել ծախսվող էլեկտրաէներգիան, մինչ դեռ մինչև վերջերս, այս ճանապարհով գնալու փոխարեն, Երևան քաղաքին չբավարարող ջրաքանակի լրացման լուծումը տրվել է նոր աղբյուրների ընդգրկման և ջրագծերի կառուցման միջոցով, իսկ ջրամատակարարման հիմնահարցը շարունակում էր մնալ չլուծված:

Ջրերի հաշվառումը հնարավորություն է ընձեռնում լուծելու երկու կարևորագույն խնդիր՝ 1) անհատական հաշվառման առկայության և ցանկության դեպքում, լուծել սոցիալապես անվճարունակ սպառողներին հասցեագրված նպաստներ տալու հարցը, 2) բացառել չվճարումների դիմաց ջրազրկումը որպես պատժամիջոց կիրառելը: Ըստ ջրաչափի ցուցմունքի, ունենալով չվճարող ջրօգտագործողի կողմից ծախսած ջրաքանակի մեծությունը, խնդիրը կարող է լուծվել իրավական դաշտում: Այս առումով կպահպանվեն նաև ՄԱԿ-ի կողմից ընդունված բանաձևի դրույթները, ջրազրկումը որպես պատժամիջոց չկիրառելու վերաբերյալ:

Ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ

Г. А. Мартиросян

**Об одной задаче экономической безопасности системы водоснабжения
города Еревана**

Обсуждаются некоторые проблемы экономической безопасности системы водоснабжения, которые подразделяются на две группы: внесистемные и внутрисистемные. Во внесистемную группу входят такие аспекты, как ситуация на правовом и налоговом поле, инвестиционная политика, дефицит воды, платежеспособность водопользователей и др. Во внутрисистемную группу входят: извлечение воды, техническое состояние системы, структурное подразделение, управление системой, утечка воды и т.п. Учет воды позволит разделить функции доставки воды от источника до водопользователя, в несколько раз сократить утечки, исключить отключение воды как метод наказания за неуплату.

Вышесказанное будет способствовать решению задачи круглосуточного водоснабжения в городе Ереване.

Գրականություն

1. ՀՀ ջրային օրենսգիրք - ՀՀ պաշտոնական տեղեկագիր. N 24 (199), 10. 06. 2002, 94 էջ:
2. *Թորմաջյան Հ. Վ., Մարկոսյան Ա. Խ., Մխոնյան Ա. Վ., Մելքոնյան Հ. Ֆ., Մկրտչյան Վ. Բ.* - ՀՀ ԳԱԱ Զեկույցներ, 2001, հ. 101, N 1, էջ 84-88:
3. *Агаджанов Г. К., Кашиур А. Д., Василенко С. И.* - Материалы международного конгресса “Вода: экология и технология”. М. ЭКВАТЕК. 2000. С. 641 - 642.
4. *Мартиросян Г. А., Оганесян А. Н., Токмаджян О. В., Маркосян А. Х.* - Материалы международного конгресса “Вода: экология и технология”. М. ЭКВАТЕК. 2004.